

ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԻ ԿՈՄԻՏԵԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ

1986 թվականի մարտի 28-ին տեղի ունեցավ Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի երկրորդ համաժողովը, որին հրավիրված էր նաև Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսը: Հայրենիք-սփյուռք մշակութային կապերի հետագա զարգացման խնդիրների մասին զեկուցումով հանդես եկավ Մշակութային կապի կոմիտեի նախագահ տիար Կառլեն Դալլաքյանը:

Խոսք առավ նաև Վեհափառ Հայրապետը: Նորին Սրբությունը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ողջույնը բերեց համաժողովին, ընդգծեց, որ այսօր հայ ժողովուրդը Մասիսի փեշերին ունի իր բարգավաճող Հայրենիքն ու ազգային պետությունը: Մշակութային կապի կոմիտեի առաքելությունն է՝ արտասահմանի ցիրուցան հայության հոգին համախմբել վերածնված Մայր Հայրենիքի շուրջ:

Վեհափառ Հայրապետը հաջողություն մաղթեց Մշակութային կապի կոմիտեի նոր ղեկավարությանը, որպեսզի նա սրտացավությամբ, իմաստությամբ և մանավանդ լավատեսական ոգևորությամբ կարողանա իրականացնել Կոմիտեի առաջ դրված հայապահպանման հայրենասիրական նպատակները: